ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 2012 թվականի գործունեության ամփոփ հաշվետվություն

2012 թ. ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ ֆինանսավորվել է 6 ծրագիր՝ հայ-ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում անցկացված «ԳՊԿ-ԳՀԱԿ-2011» մրցույթի արդյունքում, եւ 4 ծրագիր՝ Ռուսաստանյան հումանիտար գիտությունների հիմնադրամի հետ համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական հետազոտությունների ծրագրերի աջակցության «ԳՊԿ-ՌՀԳՀ-2012» մրցույթի արդյունքում:

2012 թ. հայտարարվել եւ կազմակերպվել են Հայ-ռուսական հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀՌՀ–2013» միջազգային մրցույթը, ՀՀ ԿԳՆ եւ Գերմանիայի կրթության եւ հետազոտությունների դաշնային նախարարության միջեւ կնքված մտադրությունների հուշագրի շրջանակներում անցկացվող գիտական ծրագրերի մրցույթը, «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2012» մրցույթը:

Հաշվետու տարում կոմիտեում ամփոփվել են Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմաների ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների փորձաքննության արդյունքները եւ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր–2010» մրցույթի թեմաների տարեկան հաշվետվությունները: Այս ուղղությամբ պետական միջոցներով իրականացվել է մոտ 200 գիտական գործուղում, ձեռք են բերվել 100 մլն դրամից ավելի սարքեր եւ սարքավորումներ:

Ամփոփվել է նաեւ IRMAS հայ-ֆրանսիական լաբորատորիայի 2-ամյա գործունեությունը: որի արդյունքում բարձր վարկանիշ ունեցող գրախոսվող ամսագրերում եւ ժողովածուներում տպագրվել են 45 աշխատանքներ եւ միջազգային գիտաժողովների 40 թեզիսներ: Նոր մակարդակի վրա է դրվել գիտական կադրերի պատրաստման խնդիրը. համատեղ ասպիրանտուրայի ծրագրում ներգրավված են 6 ասպիրանտներ, որոնցից երկուսն արդեն պաշտպանել են իրենց ատենախոսությունները Հայաստանում եւ ստացել են թե՛ հայկական, եւ թե՛ ֆրանսիական գիտական աստիճանի դիպլոմ: Իրականացվել է 35 փոխադարձ այցելություն՝ համատեղ գիտական աշխատանքի, ասպիրանտների պատրաստման, Հայաստանում եւ Ֆրանսիայում միջազգային գիտաժողովների մասնակցության համար:

Կոմիտեի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների ինստիտուտը եւ «Գոլոս Արմենիի» օրաթերթը սկսել են հրապարակել թերթին կից նոր գիտահանրամատչելի ներդիր՝ «Մոստ», որն ընթերցողին ծանոթացնում է Հայաստանում եւ արտասահմանում գիտության, տեխնիկայի եւ բժշկության ձեռքբերումներին:

Կոմիտեի ջանքերով Հայաստանի գիտական հանրության համար, բացի Springer-ից, 2012 թվականին հասանելի դարձան նաեւ Thomson Reuters-ի Web of Knowledge համակարգի ռեսուրսներ:

2012 թ. ընթացքում կոմիտեի միջոցով ֆինանսավորվել են 19 գիտական միջոցառումներ, 3 ամառային դպրոցներ, միջազգային գործուղման են մեկնել ավելի քան 50 գիտնականներ:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիտեի կողմից մշակվել է երկու նոր օրենքի նախագիծ եւ ՀՀ կառավարության 11 որոշում: «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծով սահմանվել են գիտական կամ գիտատեխնիկական ծրագիր եւ նախագիծ, հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա, գիտական դրամաշնորհ եւ այլ նոր հասկացություններ, ֆինանսավորման ձեւերը համապատասխանեցվել են արդի չափանիշներին, ինչպես նաեւ հստակեցվել է լիազոր մարմնի իրավասությունների շրջանակը: Մշակվել է նաեւ «Գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքի ընդունումը հնարավորություն կտա ներդնել գիտական եւ գիտատեխնիկական ծրագրերի ու թեմաների ընտրության, ինչպես նաեւ հաշվետվությունների գնահատման ժամանակակից եղանակ, կնպաստի գիտության եւ տեխնիկայի միջազգային մակարդակին համապատասխան զարգացմանը, նախագծերի ընտրությանն ու արդյունավետ իրականացմանը եւ, վերջնական արդյունքում, գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:

Հաշվետու տարում կոմիտեի մշակած 11 որոշումներից 7-ն ընդունվել է. ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայագիտության զարգացման հայեցակարգին, հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարությանը եւ դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին: Ընդունվել է «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշումը: ՀՀ կառավարությունը հավանություն է տվել նաեւ Հայաստանի Հանրապետությունում փոքր եւ միջին քիմիայի զարգացման 2012-2013 թվականների միջոցառումների ծրագրին եւ դրա իրականացման ժամանակացույցին: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն ներմուծման փոխարինմանն ու արտահանմանն ուղղված արտադրություններ, նոր աշխատատեղեր, կմշակվեն նոր տեխնոլոգիաներ:

Կառավարության մեկ այլ որոշմամբ սահմանվել են ՀՀ-ում գիտական կենտրոնների ձեւավորման նոր սկզբունքները, չափանիշները եւ կարգը: «Քենդլ» սինխրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ «Քենդլ»-ի գործունեությունը համակարգելու համար լիազոր մարմին է նշանակվել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ինչպես նաեւ հաստատվել է հիմնադրամի կանոնադրությունը:

2012 թվականը նպաստավոր է եղել նաեւ միջազգային համագործակցության առումով: Տարվա ընթացքում կնքվել է միջազգային համագործակցության 5 փաստաթուղթ, որոնք հնարավորություն են տալիս համագործակցել Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի, Thomson Reuters ընկերության, Շանհայի կիրառական ֆիզիկայի ինստիտուտի, ՉԺՀ կրթության եւ տեխնոլոգիաների նախարարության հետ: